Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԳԱՆՁԱՅՈՒՄ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

(15 հունիսի, 2011 թ.)

«Եւ Իշխան խաղաղութեան Հայր հանդերձելոյ
յաւիտենին Տէր Աստուած ընդ մեզ է»:
«Եւ խաղաղության Իշխան հանդերձյալ
հավիտյանների Հայր Տեր Աստվածը մեզ հետ է»:
(Ժամագիրք)

Սիրելի հավատավոր զավակներ Մեր,

Հարգարժան ներկաներ,

Մեծապես ուրախ ենք, որ այսօր այցելել ենք ձեզ ի Քրիստոս Մեր հոգեւոր եղբոր՝ Իլյա Բ Համայն Վրաց Կաթողիկոս-Պատրիարքի հետ եւ վայելում ենք ձեզ հետ հանդիպման բերկրանքն ու խնդությունը: Ձեզ ենք բերել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի օրհնությունը, մեր Սուրբ Աթոռի միաբան հոգեւոր հայրերի աղոթքներն ու բարեմաղթանքները եւ հայրենաբնակ եւ աշխարհասփյուռ ձեր քույրերի ու եղբայրների ողջույնները, սերն ու զորակցությունը:

Սիրելիներ, դարերի հոլովույթում բարեպաշտ մեր նախնիները իրենց վրաց եղբայրների հետ հաստատել են հիմերը ամուր բարեկամության, որի բազում վկայություններ զարդարում են էջերը մեր ժողովուրդների ավանդաշատ պատմության: Ազգասեր եւ եկեղեցասեր ձեր հայրերը եղել են մեծապես հարգված, օրինապահ քաղաքացիները այս երկրի եւ մեծ ներդրում են բերել Վրաստանի առաջընթացին, հասարակական կյանքի բարօրությանը, մշակույթի ու արվեստի զարգացմանը:

Այսօր նախնյաց օրինակով դուք եք ազնիվ ջանքերով կերտում ձեր նորօրյա կյանքը: Կերտում եք հավատարիմ մեր ազգային ավանդույթներին եւ էջմիածնադրոշմ մեր լույս հավատքին: Մեզ համար այլ կերպ կարելի չէր ընկալել Ջավախք աշխարհում բնակվող հայորդիներիդ համայնքային կյանքը: Քանզի այս հողից են ծնվել թումանյանական պատումով այն քաջ հերոսներն ու լուսապենչ ասպետները, որոնք ներշնչել են, ուժ եւ կորով ջամբել սերունդներին: Տերյանական չքնաղ արվեստն է, որ ազնվացրել եւ դարբնել է այն ոգին, որ այսօր ձեր, ձեր ընտանիքների եւ նորահաս սերնդի հոգում է, Ձեր սրտում եւ գործերում: Այդ ոգին է, որ դժվարությունների մեջ անգամ զորեղ է պահում ձեզանում հույսն ու լավատեսությունը եւ առաջնորդում ձեզ նախանձախնդիր լինելու քաղաքացիական պարտավորությունների լիարժեք հանձնառության եւ մարդկային արժանապատվությունը արժեւորող ստեղծագործ կյանքի: Սիրելիներ, հպարտ ենք ձեզանով եւ քաջալեր ձեր աննվազ հավատարմությամբ առ Քրիստոս մեր Փրկիչը, Ում Եսայի մարգարեն կոչում է Աստված հզոր, Իշխան խաղաղության եւ Հայր հավիտյանների, որ միշտ մեզ հետ է (հմմտ. Եսայի Ը 9, Թ 6):

Սիրելի բարեպաշտ զավակներ, այսօր Աստծո օրհնությամբ անկախ է Հայաստան մեր Հայրենիքը, որը շարունակում է ամուր պահել եղբայրական հարաբերությունները

ազատ ու անկախ Վրաստանի հետ՝ միջպետական համագործակցությամբ ու համատեղ ծրագրերի իրականացմամբ: Արդի ժամանակների աշխարհաքաղաքական պայմաններում մեր սերնդի ուսերին է դրված նոր կյանք, կյանքի նոր որակ եւ արժեքային նոր համակարգ ձեւավորելու ծանր ու դժվարին պարտավորությունը: Այդ կարեւոր առաքելությունը բարի արգասիքներով կարդյունավորենք, եթե մենք՝ որպես քրիստոնյա եղբայր ժողովուրդների զավակներ, ապրենք ու գործենք քրիստոսապատվեր սիրով, հավատարիմ՝ մեր հայրերից մեզ ավանդված լույս ժառանգությանը, եղբայրության ու փոխադարձ հարգանքի բարի ավանդներին: Եղբայրական ոգով եւ միմյանց սատարումով մեր հայրերի կերտած ձեռքբերումների ու հաղթանակների բարի հիշատակը մենք՝ հայ եւ վրացի ժողովուրդների զավակներս, պիտի փոխանցենք նաեւ գալիք սերունդներին, որպեսզի նրանք նույնպես իրենց կյանքում արժեւորեն եղբայրական սերն ու միմյանց հանդեպ բարի կամեցողությունը: Հարեւան մեր երկրների եւ ժողովուրդների նվիրագործված դարավոր բարեկամության այս ոգով, Մենք հավատում ենք, լուծումներ պիտի գտնեն ամենքիս հուզող՝ Ջավախքի եւ Վիրահայոց թեմի խնդիրներն ու մտահոգությունները, որոնց մասին առիթ ունեցանք զրուցելու Մեր հոգեւոր եղբոր՝ Իլիա Բ Պատրիարքի եւ Վրաստանի Նախագահ Տիար Միխեիլ Սահակաշվիլիի հետ:

Սիրելի զավակներ Մեր, Հայրապետական Մեր հորդորն է բոլորիդ՝ անսասան լինել մեր հայրերի լույս հավատքի մեջ: Եղեք օրինահարգ, իմաստուն, արժանավոր ու պատվաբեր քաղաքացիները այս երկրի: Բարեզարդեք ու շենացրեք Ջավախքը, ձեր ազգային կյանքը, աճեք զավակներով, նրանց սնուցեք աստվածպաշտությամբ, հայրենի ավանդներով ու ժառանգությամբ, եղբայրսիրության ու բարեկամության արժեքներով: Հետամուտ եղեք ուսման, գիտության եւ մշակույթին, որպեսզի պատվով իրագործեք ձեր իղձերն ու ձգտումները, որոնց ամուր հիմքերի վրա հաստատուն պիտի մնան մեր երկու ժողովուրդների եւ երկրների բարեկամությունը՝ արգասավորված սիրո, փոխհասկացողության եւ համագործակցության բարի պտուղներով:

Խաղաղությունը, փոխըմբռնումն ու գործակցությունը համամարդկային, կենսական արժեքներ եւ աստվածային պարգեւներ են, որոնցով, հավատում ենք, պիտի ապահովենք հնարավորությունը բարօր ու երջանիկ կյանքի, որովհետեւ խաղաղության Իշխանը, երկնաշնորհ պարգեւների Հայրը միշտ մեզ հետ է Իր առատ ողորմությամբ ու շնորհներով:

Սիրելիներ, վերստին գոհունակ սրտով փառք ենք մատուցում Աստծուն, որ առիթ ընձեռեց Մեզ Հովվապետական սպասված ու կարեւոր այս այցը կատարելու Վիրահայ համայնքին: Մեր շնորհակալությունն ենք հայտնում Համայն Վրաց Կաթողիկոս-Պատրիարք Նորին Սրբություն Իլիա Բ-ին, Մեր այցին օժանդակելու եւ ճամփորդության ողջ ընթացքին Մեզ հետ լինելու համար: Մեր գնահատանքն ենք բերում Վրաստանի Նախագահ Տիար Միխեիլ Սահակաշվիլիին եւ Ջավախքի իշխանություններին՝ իրենց ազնիվ հյուրընկալության եւ մատուցած զորակցության համար:

Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում Վրաստանի Հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանին, Ջավախքի փոխառաջնորդ Հոգեշնորհ Տ. Բաբկեն աբեղա Սալբիյանին, թեմի հոգեւոր ողջ դասին եւ մաղթում արգասավոր ծառայություն՝ դեպի փրկություն առաջնորդելու հավատավոր զավակներին

մեր ժողովրդի եւ նվիրյալ ծառայությամբ շինություն ու պայծառություն հավելելու ազգային ու հոգեւոր մեր կյանքին:

Աղոթում ենք, որ մեր ժողովուրդների բարեկամությունը արգասավորվի փոխըմբռնության եւ փոխադարձ հարգանքի վրա հիմնված գործակցության նոր արդյունքներով, մեր հավատակից ժողովուրդների եղբայրությունն ու սերը առավել ամրապնդող ձեռքբերումներով եւ իրագործումներով: Թող Աստված միշտ Իր Ամենախնամ Աջի հովանու ներքո պահի Վրաստանն ու Հայաստանը, Վիրահայոց թեմը եւ այս օրհնյալ երկրում ապրող մեր ժողովուրդների զավակներին:

Շնորհք, սէր եւ ողորմութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ. ընդ ամենեսեան: